Կթն վարակված վայրի գաղանանման համար գործադրվող գոր-
ծիքները.

Տրակտորյին կցան—ԱԴՏ գեղագատորը. ծառայում և խոշոր տե-
ղամասերի գաղանանման համար:

Զիր կցան—ԿԴՊ դեղագատորը. ծառայում և նույն նպատակի
համար, ինչ և ԱԴՏ:

Զենքի գաղանանման սալակ—ՎԴՏ—1. ծառայում և գոչ մեծ
հարթ տեղամասեր գաղանանելու համար:

Զենքի գաղանանման գրծիք—ՌԴՊ—1. ծառայում և մետաղե
առարկաներ և առանձին փոքր տեղամասեր կտմ կառուցվածքներ
լուծիչներով գաղանանելու համար:

Մաղ պատգարակ. գործ են ածվում քրորակրով վոքր հարթ տե-
ղամասեր գաղանանելու համար, ինչպես նաև ՎԴՊ, ԱԴՏ, և ԿԴՊ
գործիքներով գաղանանելու համար:

Կրակային գործիք. ծառայում և և վարակված փոքր տեղամասեր
գաղանանելու համար, վարակված շերտը կիզերու ձևով:

Առձեռն միջոցներ, վոր ոգտագործվում են վայրի և կառուցվածք-

6/22 143

A 17321

Ների գաղանման համար։ Չոր քլորակլով վայրը գաղանմանելու համար կարելի յե սպազործել վորոշ գյուղատնտեսական մեքենաներ (կիր ցանող և պարարտանյութ ցանող շարքացաններ)։ Բացի դրանից քլորակիրը կարելի յե շաղ տալ սովորական բաների ոգնությամբ։ Քլորակիրի շաղախով կառուցվածքների գաղանման համար կարելի յե սպազործել գուլեր, ներկարարական և ճոպիկ վրձիններ և այլն։ Հեղուկ լուծիչներով կարելի յե գաղանմանել զանազան տեսակի այգեգործական և բանջարանոցային շաղացաններ, ջրացաններ, փողոց ջրելու ավտոցիստերներ, ներկացան գործիքներ, գերջապես կարելի յե սպազործել ավելներն ու գուլերը։ Այսպիս նեղուկներ ցանելու համար կարելի յե սպազործել նույն ավտոցիստերները, այդ գեղործական ջրցանները և այլն։

Գաղանմանման կամերաները ծառայում են տաք ոդրով և գոլորշիով հագուստը, տնապին իրերը և զանազան ապարատներ (հետախոսներ, շարժիչներ և այլն) գաղանմանելու համար։ Իրեն այդպիսի կամերաներ կարելի յե հարմարեցնել բաղնիքների շողեկաթսային բաժանմունքները։

Գաղանմանման կամրաները ծառայում են բամբակեղին գործվածքների, նույնպես և ուետինի առարկաների գաղանման համար (ջրում լուսացնելու միջոցով)։

Վայրն անմիաս գործնելու համար պետք ե ցանել չոր քլորակիր ցանելու միջին նորման 400 դրամ և մեկ քառակուսի մետրի համար, կամ թե բաներով պետք ե կարել հանել վարակված շերաբ (5—8 սանտիմետր)։ Թփուտներով կամ բարձր խոտով ծածկված վալրը դաղանմանում են կրակային յեղանակով կամ քլորակիր են ցանում, նախապես հնձելով, կտրատելով կամ կրակով վոչսչացնելով բուսականությունը, գլուխի ծածկվածքը դաղանում են՝ վայրի թիերով հանելով ձյունի վարակված շերաբը։ Կի՞ն լցված ամիսառումքերի պայթման տեղում առաջացած ձագորները (փոսերը) գաղանմանում են նրանց լցնելով քլորակիր խառնած հողով (3—4 կիլոգրամ ամեն մի ձագարին)։

Մետաղի իրերի վրայից պետք ե քսուքը (յուղը) ներացնել գաղանմանմից առաջ, տրորուով այնքան, մինչեւ վոր չորանան։ Կոպիտ մետաղի իրերը (ուելսերը, ճախարակի ակները և այլն) գաղանմանում են կրակային յեղանակով կամ քլորակիրի շաղախով և վերջում լվանում են ջրով։ Դաղդյաները, զանազան մեքենաներ գաղանմանում են հեղուկ լուծիչներով։ Մանր մետաղի իրերը և գործիքները կամ լուսացնում են ջրում (1 ժամ) կամ լվանում են մանգանաթթվուտային կալիումի, քլորամինի լուծուլթներում և սովորական լուծիչներում։ Գաղանմանումից հետո լավ տրորում չորացնում են։

Կոտիս բրդեղեն գործվածքները գաղահանում են տաք ոդի (120 աստիճան) հսանքով 4 ժամվա ընթացքում: Մորթեղենն ու կաշիները՝ տաք ոդի (60 աստիճանից վոչ բարձր) հսանքով 8 ժամվա ընթացքում: Բամբակեղենը ջրի մեջ յեռացնում են մեկ ժամվա ընթացքում կամ զաղահանում են գոլորշիով (2—4 ժամ): Ռետինե կոշիկները, ձեռնոցները, հակազդի դիմակները և միացնող խողովակները, հագուստեղենը, սփռոցները, վարագույրները և այլն, ջրում լեռացնում են 2,5 ժամվա ընթացքում: Վարակված ներքնակները, բարձերն ու բալիշները վոչնչացնում են կամ հանձնում են հատուկ գաղահանման կամերաների՝ գաղահանման համար: Գորգերն ու գորգանման սփռոցները քամուն են տալիս և տաքացնում են արեի տակ, մինչև վոր հոտն անհետանա, կամ տաքացնում են տաք ոդով (60 աստիճանից վոչ ավելի): Սեղանները, աթոռները, փայտե մահճականները գաղահանում են քոլորակրի շաղախով: Մետաղե և ապակի ամանեղենը գաղահանում են լուծիչներով, իսկ այնուհետեւ լիանում են տաք ջրով և տրորում, չորացնում են:

Յերրորդ Եօրիմ

ԲԺՇԿԱ—ՍՍՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱԾՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՄԱ. 12. ԹՈՒՆԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐՈՎ ՎԱՐԱԿՎԵԼՈՒ ՆՇԱՆՆԵՐԸ.
ԻՆՔՆՈԴՆՈՒԹՅՈՒՆԻՆ ՅԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՈՂՆՈՒԹՅՈՒՆԻՆ ԹՆ
ՎԱՐԱԿՎԵԼՈՒ ԴԵՂԲՈՒՄ

ԹՆ մատկա—պայտարային ներգործուրյունը

ԹՆ մաշկա-պալարային ներգործության բնորոշ ներկայացուցիչներն են իպրիտն ու լյուիդիտը, իպրիտի կաթիլներով հարվածելու գեաքում նրա ներգործությունը յերեսում և միայն հարվածելու բուպեյից 3—6 ժամ հետո Սկզբում մաշկը կարմրում է, ապա սկսում է բշտել: 12—18 ժամից հետո սկսում է առաջանալ ջրչըռու բշտիկներ Բշտիկները պայտիում են 4—6-րդ որր, վորից հետո թեփոտում են կամ առաջանում են զանգաղ առաջացող վերքեր: Իպրիտն արագորեն թափանցում է մաշկի մեջ և լավ լուծվում է մաշկի տակ գտնվող հարպային շերտի մեջ, առանց կորցնելու իր հարվածող հատկությունները:

Հեղուկ իպրիտն աչքի մեջ բնկնելով առաջացնում է ծանր վերքում և նույնիսկ կարող է զրկել տեսողությունից: Յեթե իպրիտով վարակված սնունդը մարդ կուլ և տալիս կամ խմում և ջուրը, ապա այլ առաջացնում է բերանի խոռոչի, վորկորի, ստամոքսի և աղիքների վասակածքներ, նմանապես և որգանիզմի ընդհանուր թու-

նավորում։ Վարակման նշաններն են՝ սուր ձգող ցավեր ստամոքսում, փսխում, յերբեմն լուծ։

Իպրիտի գոլորշիներն ու մառախուղն առանձնապես աղդում են շնչառության և տեսողության որգանների վրա։ Խիստ վարակված տեղում ամռան ամիսներին (ըստ Յելիսուսի մոտ 20 աստիճան ջերմության ժամանակ) իպրիտի գոլորշիներով մաշկի լուրջ զնապահք կարող ե առաջանալ, յերբ մարդ 20—30 րոպե մաս վարակված տեղամասում, իսկ շնչառության և տեսողության որգանները տուժում են 5—10 րոպեից հետո։ Զմռան պայմաններում իպրիտի գոլորշիները գործնականորեն վտանգավոր չեն, վորովհետև ցածր ջերմության ժամանակ իպրիտը թույլ ե գոլորշիանում։

Իպրիտի գոլորշիներով շնչառության որգանների հարվածման նշանները հայտնաբերվում են մի քանի ժամից հետո կրծքի ցավի, խռովուության, հաղի, հարբուխի, գլխացավի ձևով։ Հետաքայում կարող են լինել ծանր բարդություններ (որինակ թոքերի թարախակալած բորբոքում), Յերկրորդ—լերորդ որը նկատվում ե շրթունքների, նոդերքի այրվածքներ. քթի լորձաթաղանթը ծածկվում է թարախուտ լորձունքով։ Միաժամանակ զարգանում են որգանիզմի ընդհանուր թունավորման յերկույթներ։ Շնչառության որգանների համար առանձնապես վտանգավոր ե իպրիտի մառախուղն. իպրիտի մառախուղի մեջ 2—3 անգամ ներշնչելը կարող է առաջ բերել մահացում։

Լշուիզիր հիմնականում առաջացնում ե միենալին վնասվածքները, ինչ և իպրիտը, բայց ունի նաև վորոշ տարբերություններ։ Նախ նա ընդունակ է առաջացնելու վոչ միայն մաշկա—պալարական, այլ և գրգռիչ ներդուժություն՝ առաջ արցունք, սուր այրվածքներ քթի և կոկորդի մեջ, փոշառը, լորձունքի հոս քթից, սրտախառնությունն է փսխոց։ Յերկրորդ, հեղուկ լյուիզիտի ներդուժությունը մաշկի վրա արտահարովում է անհամեմատ ավելի արագ, քան իպրիտի ներգործությունը, հարվածված տեղերում արդեն առաջին 30 րոպեյի ընթացքում յերևում է կաղմբություն, զգացվում է այրվածք և ցավ։ մաշկի ուռչելն ու բշտիկներ առաջանալին սկսվում են 4—8 ժամից հետո։ Յերրորդ, լյուիզիտոն ավելի ուժեղ ներգործությունն է ունենում ծանր հարվածությունների գեղքում (փսխում, գիտակցության կորցնելը, մաշկի զգայության կորցնելը, ձեռքերի և վոտների ժամանակավոր պարալիչ),

Հեղուկ իպրիտի կաթիլներով վնասվելու գեղքում ամենից առաջ պետք է իպրիտի կաթիլները մաքրել մաշկի վրայից, ոգտվելով անհատական սանիտարական կապոցից կամ բամբակի, մառլայի, ծծան թղթի մաքուր լաթի ոգնությամբ։ Իպրիտի կաթիլները մաքրելիս պետք է ուշադրությամբ բամբակը կամ մառլան մոտեցնել մաշկին և ծծեցնել կաթիլը, այնուհետև, մաշկի տուժած մասերը մի քանի

անդամ պետք և սրբել լուծիչներով (բենդինով, սպիրտով, կերոսինով և այլն): Առաջին հնարավորության զեպքում խպրիտից տուժողը պետք և տաք դուշ ընդունի կանաչ ոճառով:

Աչքերը պետք և լվանալ սողայի մեկյերկու տռկոսալին և ըուրաթթվի յերեք տոկասային գոլ լուծույթով. լվացումը կատարվում է անընդհատ շիթով: Նույնական լուծույթով պետք և ողողել բերանը, կոկորդը և քթի ծակերը: Խպրիտի գոլորշիներից և մառախուզից տուժելու զեպքում ամենից առաջ պետք և լվանալ աչքերը և ողողել բերանը, կոկորդը, քթածակերը և ապա լողանալ դուշի տակ:

Յեթե մաշկը տուժել և լուծիղիտից, ապա պետք և բամբակի, մառալի և այլն կտորներով ուշադրությամբ ծծեցնել լուիզիտիկ կաթիները այնուհետև պետք և մաշկը լվանալ կ'ու նատրի հինգ տուկոսալին ջրալին լուծույթով և լողանալ դուշի տակ: Աչքերը, բերանը և քթածակերը պետք և լվանալ նույն ձեռվի, ինչպես և խպրիտից տուժելու զեպքում:

Խեղդող ԹՇ Շերպործումը

Խեղդող ԹՇ հարգածում են շնչառության որդանները, առաջացնելով հիվանդագին հաղ և թուլություն Մանր թօնավորութիւնը ժամանակի ժամանակի սկսվում և տանջալից հաղ՝ խոխոցով և խղխղոցով, արտաթորքում և փրփրոտ խորխ (յերեխն արյունով), սկսվում և ուժեղ թուլություն, խռպոտություն և ձայնի խղում: Ձեռքերը ու վոտքերը կապում և սառչում են: Կարող և զարգանալ թոքերի ուռուցքը, վորհացնում և մահվան: Այս բոլոր յերեսութները լինում են քլորով և ֆոսֆենով զբասիերու գեպքում: Տարրերությունն այդ յերկուսի միջնամենից առաջ այն ե, վոր փոքր քանակությամբ գործածված ֆառգենի ներգործությունը մի անգամից չի արտահայտվում: Ֆոսֆենի վոչ մինձ քանակության յերկարած ներգործության ժամանակ թունավորում ը թանում և հետևյալ կերպ սկզբում, հենց առաջին ներշնչութիւնի ժամանակ սկսվում և թեթեն հաղ, թույլ պիտապույա, բնորոշ համ բերանում, իսկ այնուհետև այդ բոլոր յերեսութներն անհետանում են 4—6 ժամվա ընթացքում տուժողն իրեն համեմատաբար լավ և զգում: Այնուհետև արագ և ուժեղ սկսվում և զարգանալ ծանր թունավորումը, սկսվում և շնչարգելություն, հաղ, փրփրոտ և խորխով, վխում, թոքերի ուռուցք և այլն: Փոսդենով թունավորվելը հաճախակի վերջանում և մահով, մանաժանգ, յեթե համեմատաբար թվացող լավ վիճակում տուժողը շարժութիւնը և արել համ վորեն փիգիկական աշխատանք և կատարել Մեծ քանակությամբ գործածված ֆոսֆենի ներգործման զեպքում ծանր մի թունավորումը կարող է

զարգանալ ջատ արագ՝ թունավորված ողբ մի քանի անդամներչնչելուց հետո:

Քլորով հարգածելու դեպքում թունավորումը զարգանում է հենց առաջին ներշնչումներից սկսած, և աստիճանաբար ուժեղանում են վերևում նկարազրված վարակման նշանները:

Քլորով կամ փոսկենով թունավորվածին ոգնություն ցույց տալու համար ամենից առաջ անհրաժեշտ ե անմիջապես զարգարեցնել թէն ներգործությունը որքանիզմի վրա այսինքն՝ դուրս տանի վարակված շրջանից, կամ սարքին հակագաղ հաղցնել: Բոլոր դեպքերում ցանկալի են, վոր վարակվածն ինքը տեղ չդնա, այլ վոր նրան փոխադրեն ուղիղ ները:

Առաջին հնարաբորության դեպքում պետք է ըերանն աղողել սողայի յերկառկոսային լուծուկթով և աչքերը լիանալ սողայի մեկտուկոսային կամ բորաթթվի 1—2 տոկոսային լուծուկթով: Յեթե այդ լուծույթներից ձեռքի տակ չկա, առա ըլվանալ ջրով: Վարակվածին պետք ե լիակատար հանգիստ տալ, պառկեցնել, տաք ծածկել, տաք ըմպելք տալ (թեյ, կաթ, սուրճ), թուլլ չտալ ծխելու: Հազելու դեպքում տալ ներշնչելու սողայի յերկառկոսային լուծույթ կամ յեթեր (բամրակից), Յեթե ձեռքի տակ թթվածնի բարձ կա, առա ներշնչել տաք թթվածին: Վոչ մի դեպքում արհեստական շնչառություն չանիլ:

Ընդհանուր բունավորում պատճառող թէն

Այս թէն շնչառության սրգանների միջոցով հարգածում են ներգային սիստեմը կամ արյունը: Թունավորման նշաններն են գլխապտույտ, սրտի խփոց, ընդհանուր թուլություն, սրտախառնություն, փսխում, զլիսացավ, գիտակցության վորոշ թուլություն, իսկ ձանրթունավորման դեպքում՝ ուշաթափություն, շնչառության խիստ թուլություն կամ կանգնում, ջղաձգություններ, պարակիչ (անդամալուծություն) վորին կարող է հետեւ արագ մահացություն:

Ընդհանուր բունավորում պատճառող թէն բիլին են պատկանում ածխորըու (ուգարի գտազը) լիվ կապտարքան: Փոքը քանակությամբ գործածված ածխաթթվով թունավորվելու դեպքում տուժողը զգում ե գլխում ծանրություն ու զլիսացավ, ականջների խչչոց, տեսողության միֆանեում, սրտախառնություն, գիտակցությունը կիսով չափ կորցնում ե: Միև քանակությամբ գործածված ածխաթթվից կորցնում են գիտակցությունը, մարմնի վրա զուրս և տափս կարմիր ցան կամ վարդագույն բծեր, գեմքը կարմրում ե: Կապտարքի թունավորվելու դեպքում թունավորման ընդհանուր պատկերը չափաղանց արագ և զարգանում: Կոկորդում քերծվածք, բերանում դառը համ զդալուց, սրտախառնությունից, զլիսացավից և շնչարգելությունից հետո թունավոր-

գածը կորցնում և գիտակցությունը և սկսվում են սոսկալի ջղաձգումներ: Այնունեան կանգ և առնում շնչառությունը և դադարում և սրտի աշխատանքը: Այս բոլոր յերկութիւնները կարող են կատարվել մի քանի տասնյակ վայրկյանի ընթացքում:

Ոգնությունը պետք ե ցույց տրվի շատ արագ, այլապես թուշափումը կարող և վերջանալ մահացությամբ: Հիվանդին պետք ե դուրս տանել թարմ ոդ, տալ գրգորիչ միջոցներ (փաթաթել սառը ջրում թրջաց սավանի մեջ, շինել թաց կտորով, գուրս հանել լեզուն, տալ հոտուելու անուշագրի (նաշաղիրնի) սպիրու, տաք սուրճ): Յեթե այդ ամենը չեն ոգնում, պետք ե յերկարատև արհեստական շնչառություն անել և առա թունավորվածին տալ լիակատար հանգիստ, տաք ծածկել, տալ տաք ըմպելիք:

Գրգորիչ ներգործություն ունեցող ԹՆ

Գրգորիչ ներգործություն ունեցող ԹՆ հարվածում են աչքերը կամ քթի և կոկորդի լորձաթաղանթը: Աչքերում սկսվում և զգացվել այրվածք և ծակոց, առատ արտասվարերություն, աչքերը չեն դիմանում լույսին, կոպերը կարմրում և ուռչում են. կոպերը ջղաձկաբար փակվում են, Քթի և կոկորդի գրգուլերու զեպքում ամենից առաջ քթում և կոկորդում սկսվում և սուր այրվածք, քերծվածք և խորհուց շաճախ լինում և անընդհատ փոշտոց, քթից լորձունք և հոսում, քթում և կոկորդում զգացվում ե ցավ, նրանք ուռչում են, առատ թուք և արագիցվում, կրծքի վանդակում ճնշում և զգացվում, լինում և գլխացավ, հազ, յերեմն ել ցավում են առանները, ծնուաները. փըսին են սկսում:

Քյորացետմեններ առաջացնում և աչքերի սուր գրգորում, իսկ մեծ քանակությամբ գործածված լինելու դեպքում առաջացնում և հազ, հոս քթից և արտասվարերություն:

Աղամսիսը առաջացնում և քթի և կոկորդի խիստ գրգորում: Նույնիսկ աղամսիսի ծխի ամպում կարճատև ժամանակ մնալ (2—3 րոպե) մարգուն 2—3 ժաման զրկում և աշխատունակությունից: Աղամսիսի յերկարատև ներգործությունն առաջացնում և ծանր թուշափում:

Քլորացետոֆենոնով հարվածելու դեսքում պետք ե սոդայի յերկատուսային լուծույթով կամ գոնե ջրով լվանալ աչքերը և ողողել բերանը: Վոչ մի զեպքում չի կարելի աչքերը ձեռքով արորել կամ թաշ կինակով սրբել: Դա ուժեղացնում և զրդում:

Աղամսիսով հարվածվելու դեպքում պեաք (և 1) սոդայի յերկատուսային կամ բորաթթվի 2—3 տոկոսային լուծույթով լվանալ քիթը:

Կոկորդը և աչքելիը. 2) ներջնէլ անուշադրի (նաշաղիքնի) սպիրտ, յնթեր, գինու սպիրտ: Ըստունել տաք թեյ կամ սուրճ:

Թ Ե Մ Ա. 13. ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱԿԱԽՊՐԻՏԱՅԻՆ ՅԵՎ ՎԻՐԱԿԱՊԱԿԱՆ
ԿԱՊՈՅԻՅ ԱԴՏՎԵԼԸ, ԱՐՃԵՍՑԱԿԱՆ ՇՆՉԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ,
ԱՐՅՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԴՆԵՑՆԵԼԸ ՅԵՎ ՎԵՐՔԻ ԿԱՊԵԼԸ,
ՏՈՒԺԱԾՆԵՐԻՆ ՓՈԽԱԴՐԵԼԸ

Անհատական հակախպրիտային կապոցը ծառայում և մաշկի նախ-
նական մաքրման համար, մաշկի վրա մաշկա—պարաբրին թն՝ ընկ-
նելու գիտքում: Կապոցը բաղկացած և փոքրիկ թիթեղյա տուփից,
վորի մեջ դասավորված են բամբակի և տառլայի տամագններ՝ իլիմած
լուծիչների մեջ: Տամագնները միացած են մեկ ընդհանուր թիթեղի:
Այդ թելը հեշտությամբ կտրելու համար տուփի վերևի մասում կա
մի հատուկ թիթեղյա կտրիչ: Տուփի կափարիչի վրա ներսի կողմից
հայելի կա, վորից պետք և ոգտվել գեմքը կթն կաթիքները մաքրելիս:

Կապոցից պետք և ոգտվել հետեյալ ձևով. բանալ կափարիչը և
դուրս քաշել վերին տամագնները. կտրել տամագնները միացնող թելը
թիթեղյա կտրիչի ողնությամբ. փոքր ինչ մզել տամագնները. զգուշու-
թյամբ տամագննով հանել կթն կաթիլը. Այդ տամագննը դցել մի կողմ
և հանել հետեւողը և այն մզել մաշկի վարակված տեղի վրա: Այս
ձևով մաշկի վարակված տեղը պետք և մաքրել 5—10 բոպելի բնթաց-
քում, մզած տամագնները փոխելով նոր տամագններով: կթն վա-
րակված աչքը տամագննով լվանալ չել կարելի:

Արյուննոսությունը կարիի յել կանգնեցնել հետեյալ ձևով. մար-
թի վրախոր մասը պետք և վեր բարձրացնել, մեջքի տակ դնելով
մի վորնե առարկա: Սղմել այն զարկերակները, վորոնցով արյունը
հոսում և զեղի վերքը այլպես կարելի յել անել այն տեղերում, վոր-
ակ զարկերակը վուկրից մոտիկ և գտնվում. պետք և մատներով շո-
շափել այն տեղը, վորանիկց խփում և արյունը և զարկերակը ուժից
սղմել վուկրին: Վերքից վերև գանձող մասը կապել ձգված բավթա-
յով, փոկով, թոկով, թելով, թաշկինակից կտրած ոլորով և այն
կապը փաթաթելուց առաջ մաշկը փաթաթել փափուկ կտորով, (թաշ-
կինակ, բինա), վորպեսդի մաշկը չը ձգմի:

Աիրակապը հնարավորություն և տալիս կապելու իր կամ ընկե-
րոջ վերքը, մինչև բժշկից ոքություն ստանալը: Այդ կապոցը բաղ-
կացած և բամբակի և տառլայի յերկու կոմպրենից (իրար վրա պինդ
գարսված մառլայի յերկու քառորդում կտոր, վորոնց արանքում
բամբակ և դրված), մառլայի բինանից և անզինական քորոցից: Կապո-
ցի մեջ պարունակվածը փաթաթված և տառը թղթի մեջ և գտնվում ե

ուստինացված կտորից կտրած ծածկոցի (չեխոլի) մեջ, իսկ վերջինա զբած և բարակ կտորից կարած ծածկոցի մեջ,

Կապոցից պետք ե ոգտվել հետեւալ ձեռվ. կապոցը պետք ե վերցնել ձախ ձեռքը, իսկ աջով քաշել ծածկոցի կարի թերի ծայրը, Հանել և դեն զցել ծածկոցը, պատռել ուետինացված կտորից կարած ծածկոցը և դեն զցել Հանել անդիմական քորոցը, բացել թուղթը և վերցնել վիրակապական իրերը, Բինտը վերցնել աջ ձեռքը, իսկ ձախով բանել բինաի աղատ ծալրից, վորին կարված և մառալի կոմպ-րեսը, Պետք ե հետեւել, վոր ձեռքերը կամ հագուստը չգիտչեն կապի այն յերեսին, վորը դրվում և վերքի վրա (կապի այն կողմին, վորին կարելի յեղիպել, կարված և կարմիր թելով),

Բինտը փաթաթելիս պետք ե կատարել հետեւալ կանոնները, բինտը պահել աջ ձեռքում, կոմպրեսը վերքի վրա պահել ձախ ձեռքով, իսկ աջով բինտը տանել վիրավորի մարմինի վրայով այնպես, վոր բինտը բիրվի գեղի իր ձախ ձեռքի կողմը, Բինտը պետք ե պինդ կոչի մարմինն, բայց վիրավորին պետք ե ցավ չպատճառի և չխանդարի արյան շրջանառությանը (յեթե բինտը խանդարում և արյան շարժմանը, այդ գեղվորում մաշկը բինտից ներքեւ սառչում և կապում ե), Բինտը լավ փաթաթելու համար պետք ե բինտը լեռ ծալիել, Զի կարելի կապը դնել հագուստի կամ սպիտակեղենի վրայից, Զեռքերով կամ այլ առարկաներ չը դիպցնել վերքին, վերքը ջով կամ այլ հեղուկներով չը բինարը Փորձ շանել վերքից հանելու նրա մեջ վառված գնդակները կամ գնդակի բեկորները:

Վիրավորին տեղափոխելու համար նրան պետք ե նստեցնել նստարանի ձեռվ պահած ձեռների վրա, կարճ տախտակի, փայտի վրա և այլն, Յեթե վիրավորը կորցրել ե իր գիտակցությունը, ապա նրան յերկու հոգով առանց պատղարակի (նասիլկայի) տեղափոխելու ժամանակ տեղափոխողներից մեջ կանոնում և վիրավորի գլխի մոտ և նրան բռնում և արձունկների տակից, մյուսը կանոնում և մեջքն արած վիրավորին և բռնում և նրա վոտներից՝ ծնկներից փոքը բնչ ցածր,

Արհեստական շնչառություն կատարելու կարիք կինի ամենից առաջ ընդհանուր թունագորում առաջացնող թև պատճառած ծանր թունավորումների և գիտակցությունը կորցնելու ժամանակ, յերբ այս կամ այն պատճառով շնչառությունը ժամանակավորապես զարդարել կամ խիստ թուլացել ե:

Արհեստական շնչառության յեղանակներից մեկը Շեփֆերի յեղանակն ե, Այդ յեղանակով տուժածներին փորի վրա պառկեցնում են զետնին, ձեռքերը ձգում են առաջ և գլուխը շուռ են տալիս կողքի վրա (տուժածի վրայից նախապես հանում են խանդարող հագուստը),

Այսուհետև արհեստական շնչառություն կատարողը չոքած կանդնում և ախափես, վոր տուժածի կոնքը գտնվի նրա ծնկների միջև։ Դրանից հետո ողնություն ցուց տվողը մեկնում և իր ձեռքերը և դնում և տուժածի մեջքի վրա այնպես, վոր ձեռքերի թաթերը գտնվեն տուժածի գողնաշարի լերկու կողմում, նրա ներքնի կողերին մոտիկ։ Կուանալով առաջ, նա իր մամնի ծանրությունը գցում և ձեռքի թաթերի վրա, և ճնշելով տուժածի կրծքի վանդակը, ստիպում և վոր նա արտաշնչի. դրանից հետո արհեստական շնչառություն կատարողը դադարեցնում և ճնշումը և մի փոքր վեր և բարձրանում, այդ ժամանակ տուժածի կրծքի վանդակը ուղղվում և և ոդ և ներծծում։ Այսուհետև, հերթով ճնշելով և ազատ թողնելով (մեկ րոպեյում. 16—20 անգամ) տուժածի կրծքի վանդակը, արհեստական շնչառությունը, շարունակում են այնքան ժամանակ, մինչեւ վոր տուժողն ինքը սկսի շնչել Յեթե յերկու ժամկա ընթացքում տուժածն ինքը չի սկսում շնչել ապա արհեստական շնչառությունը, սովորաբար, անոդում և այլքու

Մյուսը՝ Սիլվեստրի լեզվակն և. Այս լեզվակն էլ հետևյալն և. հազուարից գունդ են կապում և դնում են տուժածի մեջքի տակի թզություն ցուց տվողը չոքած կանգնում և տուժածի գլխի մոտ, բռնում և տուժածի արմունկներից ներքն և առանց շտապելու (ժմեկ—յերկու հաշվով) նրա ձեռքերը բարձրացնում և տուժածի զլխափերեր և քաշում և դեպի իրեն։ Սպասում ե 2 վայրկյան, ապա «յերեք—չըսա» հաշվով տուժածի արմունկները յետ են տանում և 2 վայրկյանով արմունկները կպցնում և կողքերին։ Տուժածի արմունկների յերկարացներու ծալը մեկ րոպեյում կատարում են 16—30 անգամ, այնքան ժամանակ, մինչեւ վոր տուժած մարդն ինքն սկսի շնչել ինքնուրույն կերպով։ Արհեստական շնչառություն կատարելիս պետք և հետևել, վոր տուժածի լիզուն յետ շնկնի

Զորուք նորմա

ՀԱՎԱՀՐԴԵՀԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Թ Ե Մ Ա. 14. ԻՆՉՊԵՍ ՆՎԱԶԵՑՆԵԼ ՀՐԴԵՀԻ ՎՏԱՆԴԻ ՏԱՆ ՄԵԶ

Կրակի արագ տարածվելու վտանգը նվազեցնելու և պայքարը հերքենի դեմ հեշտացնելու համար վաղորոք պետք և ձեռք առնել մի շարք նախադպուշական միջոցառումներ, այն և պետք և տանիքներից, նախասնյակներից հեռացնել հեշտ բռնկվող առարկաները. վորոշել սենյակներից մարդկանց դուրս բերելու կարգը՝ տուաջուց նշված հարմար ճանապարհներով. պատրաստել հրամարիչներ, ապադ պար-

կերում և արգինսերում, ջուր, լինգեր, բահեր, դուզլեր, ջրատար ծոռականեր և այդ ամենը զետեղել վորոշակի տեղերում. արգելել վոր քնակարաններում հեղուկ վառելիքի մեծ պաշարներ պահեն և ստուգել դրա կատարումը: Բոլոր սանդուղխքների վրա տան ակտիվատներից կազմակերպել հրշեց պոստեր. տան բոլոր բնակիչներին սովորեցնել, թե ինչպես պետք եւ վարվել հրամարիչների հետ և թե ինչպես պետք և հրձիդ ոռումբերից ծագած հրդեհը ավագով հանգցնել.

ԹԵՄԱ. 15. Ի՞ՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՊԱՅՔԱՐԵԼ ՀՐՁԻԴ ՈՌԻՄԲԵՐԻՑ ԾԱԳԱԾ ՀՐԴԵՀԻ ԴԵՄ

Հրձիդ ոռումբի այրվող նյութը չի կարելի ջրով հանգցնել (ջուրը միայն սաստկացնում է հրդեհը), այլ պետք եւ ավագ ցանել, Շատ լավ կլինի, թթե առաջուց պատրաստված լինեն 5—10 կիլոգրամանոց ավագով լի պարկեր, վորոնց ավազը պետք եւ շաղ տալ կրակի ոջախի վրա: Հրձիդ ոռումբից կրակը շրջակա առարկաների և շենքերի վրա տարածելու դեպքում նրանց կարելի յե հանգցնել սովորական լեղանակով, ջրի և հրամարիչների ողնությամբ:

ԹԵՄԱ. 16. Ի՞ՆՉՊԵՍ ՈԴՏՎԵԼ ԶԵՌՔԻ ՀՐԱՄԱՐԻՉՆԵՐԻՑ

Զերքի հրամարիչները լավ միջոց են հրդեհի վոչ մեծ ոչախներն արագորեն հանգցնելու համար: Հրամարիչները պետք եւ ողտափորձել հետեւյալ ձևով, անոթը շուռ տալ հատակը դեպի վեր, ձեռողյա ձողի ծալքի կոճակը խփել հատակին և հատուկ անցքից դուրս հոսող փրփուրն ուղղել կրակի ոջախի վրա:

ՀԱՆգերուգ Ըստմա

ՀՈՔՊ-Ը ՏՆԵՐՈՒՄ

ԹԵՄԱ. 17. ՏԱՆ ՀՈՔՊ—Ի ԼԻԱԶՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տան ՀՈՔՊ—Ի լիազորն այն անձնավորությունն է, վորը խորհրդային իշխանության և հասարակալնության առաջ պատասխանատու յեւ տան հակոդային և քիմիական պաշտպանության համար: ՀՈՔՊ—Ի լիազորներ են համարվում տների կառավարիչները: Լիազորը տան բնակիչներից կազմակերպում և ՀՈՔՊ—Ի ինքնապաշտ-

պանության խմբակ և ինքը հանդիսանում ե այդ խմբակի պետը։ Նա հոգ և տանում, վոր տան բոլոր բնակիչները ծանոթ լինեն այն կաւ նոնների հետ, վոր անհրաժեշտ ե գործադրել հակառակորդի ողային հարձակման պայմաններում։

Լիազորը կազմակերպում ե «Պատրաստ ՀՈԹՊ»—ի նորմաների ուսամնասիրությունն ու հանձնումը տան բնակիչների կողմից, նա պետք ե իմանա, թե ինչ չափով բնակիչներն ապահովված են հակառագերով։ Յեթե հակառագերի թիվը պակաս ե, լիազորը կազմակերպում ե հակառագերի գնումը բնակիչների կողմից։ Երա պարտականությունն ե բոլոր բնակիչներին սովորեցնել հակառագերից ողափելու ձեր, կազմակերպել հակառագային սիստեմատիկ մարզանքներ և անցկացնել վարժություններ՝ ծխարկման խցերում։

Լիազորը պետք ե հակի թե տան բնակիչները վորքան ճիշտ են կատարում հականրգեհացին պաշտպանության կանոնները։ Նա հոգ և տանում, վոր տունն ապահոված լինի հականրգեհացին անհրաժեշտ կահավորումով, սիստեմատիկորեն սուսուցում ե այդ կահավորման վիճակը և միջոցներ ե ձեռք առնում, վոր տան բոլոր բնակիչները կարողանան ձեռքի տակ յեղած միջոցներով հրցելը հանգցնել և գրանցնել թե նրանցից յուրաքանչյուրն ինչ պետք ե անի հրցելը ծագելու գեպքում։

Լիազորը կարմիր խաչի կազմակերպության հետ միասին հոգ և տանում, վոր տան բնակիչներից կազմվեն անխտարական ողակներ և տունն ունենա առաջին ողնության փոքրիկ ղեղատուն, վոր բոլոր բնակիչները սովորեն ինքնոգնության և փոխադարձ ողնության պարզ յեղանակները և հանձնեն «Պատրաստ սանիստարական պաշտպանության» նորմաները։ Լիազորը միջոցներ ե ձեռք առնում ապաստարան ստեղծելու ողային սումբերից պաշտպանվելու, բնակարանները սարքավորելու հակաբիմիական տեսակետից և նսխապատրաստում և լուսա-քողարկման միջոցառումների համար։ Աղային հարձակումների ժամանակ կարգը պահպանելու համար լիազորը կազմակերպում ե հեղափոխական կարգը պահպանող ողակներ։

Աղային հարձակման պահպաններում լիազորը, հիմնվելով իր ստեղծած ՀՈԹՊ—ի ակտիվի՛ ինքնապաշտպանության խմբակի վրա, ապահովում ե այն կարգն ու կազմակերպվածությունը, վորոնք անհրաժեշտ են ողային հարձակման հետևանքների դեմ հաջողությամբ պայքարելու համար։ Մյու նպատակով լիազորը վաղորոք մշակում է ՀՈԹՊ—ի տան բնակիչների զործողությունների պլանը՝ թշնամու ողային հարձակման դեպքում։ Այդ պլանը լիազորը պետք ե հասցնի ամեն մի բնակչին։

ԹԵՄԱ. 18. ԽԵՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԴԵՐՆ ԱԿ
ԽՆԴԻՐՆԵՐԸ

Բնակչության հակողային և քիմիական պաշտպանությունն ամենից առաջ հենց իրեն բնակչության գործն եւ Ամեն մի բնակչությունը և առանձին տան մեջ պետք եւ կաղմակերպված լինի ինքնապաշտպանության խմբակ, վորը բաղկացած եւ քիմիական, հակարգեհային, սանիտարական և հեղափոխական կարգը պահպանող ողակներից: Խմբակը գլխավորում եւ տվյալ բնակչարձկոոպի կամ տան լիազորը: Խմբակն անցնում եւ ՀՈԲՊ—ի ուսուցման դասընթացը, վորպիսին պետք եւ կառուցված լինի այն հաշվով, վոր խմբակի յուրաքանչյուր անդամը կարողանա կատարել վոչ միայն տվյալ ողակի մարտիկի պարտականությունները, այլ վոր ամբողջ խմբակը հարկավոր գեազգում կարողանա մասնակցել հրդեհ հանգցնելու, վիրավորներին և տուժածներին առաջին ոգնությունը հասցնելու գործում: Խմբակի մարտիկները պետք եւ հրահանգիչների ղեր կատարեն, ոգնելով պետին (ՀՈԲՊ—ի լիազորին) սովորեցնելու տան բոլոր բնակիչներին, թե ինչպես պետք եւ պաշտպանվել ողային հարձակումներից և ամբողջ տունը նախապատրաստել այդ պաշտպանության համար:

Խմբակն իր մարտական պատրաստությունը պետք եւ սերտորեն շաղկապի կուլտուրական, բարեկեցիկ բնակարան ստեղծելու պայքարը հետո Սանիտարական ողակները կաղմակերպում են հերթապահություններ՝ զժբախտ զեպքերում անհետաձգելի ոգնությունն ցույց տալու տան բնակիչներին, հսկում են բնակարանների, բակերի մաքրության վրա, պայքարում են սանիտարական պարմանների բարելավման համար: Հրդեհաշեջ ողակները հսկում են տան հակահրդեհային ինվենտարի պահպանության վրա, և թե տան բնակիչները կատարում են արգլոք անվտանգության կանոնները պրիմուսներից, հավթավառերից, գաղից ոգտվելու, հեղուկ վառելիք պահելու տեսակետից: հսկում են ելեկտրոհաղորդման գծերի, վառարանների, ծխնելուցների, ջրամատակարարման սարքին գրության վրա, հրդեհի զեպքում տունը պժոնունի յելքերով ապահովելու վրա և այլն:

Քիմիական ողակները տան բնակիչներին ոգնում են քիմիական սեթողներով պալքար կաղմակերպելու բնակարանների խնասատուների և պարագիւների ղեմ, Ամեն մի ողակ սովորաբար բաղկացած են 5 մարդուց, իսկ ինքնապաշտպանության խմբակը՝ 20 մարդուց:

Խնդիրապահության խմբակը քաղաքացիական բնակչության ՀՈԲՊ—ի հիմքն եւ Նա պետք եւ կաղմակերպված լինի ամեն տան մեջ և պետք եւ հանդիսանա ՀՈԲՊ—ի այն սկզբնական կաղմակեր-

պությունը, փորք ՀՈՔՊ—ի բոլոր ալլ ստորաբաժանումներից և խըմ-
բերից ավելի շուս կարող ե ոգնության դալ տվյալ բնակվարձկոռալի-
և տան բնակիչներին. Խմբակը տան բնակիչների ոգնությամբ կա-
րող ե կատարել մի շարք անհետաձգելի աշխատանքներ, զիրցնելով
ողային հարձակման հետևանքները մինչև ՀՈՔՊ—ի քիմիական, սա-
խտարական, հրշեջ և այլ խմբերի դալը, փորոնք ուղարկում են
հարվածման յենթարկված ոջախները. Վորքան ավելի շատ և տվյալ
բնակավալրում ինքնապաշտպանության խմբակների թիվը, այնքան
ավելի արագ, լրի և վստահորեն և ավելի նվազագույն կօրուոտնե-
րսկ կարելի չե վերացնել հակառակորդի ողային հարձակման հետևանք-
ները.



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

62

Պաշ-ավիաքիմի խնդիրները հակողային և քիմիական պաշտպանության գործում	3
Ողալին հարձակման միջոցները	5
Ինչպես ճանաչիլ թի՞ն	6
Ինչ պետք է անել ողային և քիմիական վտանգի ազդանշանները տալու դեպքում	8
ԲԵ ԵՆ հակագաղի նշանակումն ու կազմությունը	10
ԲԵ ԵՆ հակագաղից ոգտվելու ձևը	12
Հասարակ գաղապատարանի սարքավորումը	13
Ինչպես դուրս գալ վարակված վայրից	14
Կենսամթերքների, ջրի և այլ առարկաների պահպանումը ԲԵ Ներ- գործությունից	15
Գաղահանման հիմնական միջոցները	16
Թունավոր նյութերով վարակվելու նշանները. ինքնոգնությունն և փոխադարձ ոգնությունն թի՞ն վարակվելու դեպքում	19
Անհատական հակաբարիտապին և վիրակապական կապոցից "գտվելը, արհեստական շնչառության կատարումը, արյունհոսությունը կանդ- նեցնելը և վերքի կապելը, տուժածներին փոխադրելը	24
Ինչպես նվազեցնել հրդեհի վտանգը տան մեջ	26
Ինչպես պետք է պայքարել հրձիք սումբից ծագած հրդեհի դեմ .	27
Ինչպես ոգտվել ձեռքի հրամարիչներից	27
Տան ՀԱԲՊ-ի լիազորի պարտականությունները	29
Ինքնապաշտպանության խմակների դերն ու ինդիրները	29

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0009500

A II
17321

БУДЬ ГОТОВ
К ПРОТИВОВОЗДУШНОЙ
И ХИМИЧЕСКОЙ
ОБОРОНЕ.

Составлено
А. Мальшинским
Гос ССР Армении, Ереван, 1936 г.